

**ԱՎԱՏՐՈՎՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՐԸ 1912-1914ԹԹ.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՄԱՆՎԵԼ ՌՓՅԱՆ**

Թուրքիայի «վերաբաժանումը» և նրա տարածքային կորուստները Եվրոպայում 1912թ. տանուլ տված Բալկանյան պատերազմից հետո, Օսմանյան կայսրության համար ավելի անհրաժեշտ դարձրին Թուրքահայաստանը: Սկսվեց թուրքախոս ժողովուրդների ներգաղթը դեպի Անատոլիա և Հայաստան: Թուրքական և քրդական զինվորներն արյունոտ վրեժ էին լուծում Բալկանյան թերակղզում կրած պարտության դիմաց: Եվ Թուրքահայաստանից անընդհատ հասնող անհանգստացնող լուրերը ստիպեցին Ռուսաստանին 1912թ. նոյեմբերի 26-ին նոտա հղել Բարձր 'Դռանը' հայերի համար ռեֆորմների պահանջով:

Հայտնի է, որ բարենորոգումների խնդրում ռուսական դիվանագիտությունը միշտ էլ հանդիպում էր թուրք-գերմանական ընդդիմությանը: Գերմանիան չէր ցանկանում, որ բարենորոգումներից հետո Ռուսաստանն այնպիսի ռազմաքաղաքական ձեռքբերումներ ունենար, որոնք կվտանգեին իր շահերը Մերձավոր Արևելքում: Այս պայմաններում Գերմանիան ամեն քայլի դիմում էր Թուրքիան իր ազդեցության ոլորտում պահելու համար: Սա է ապացուցում 1913թ. հունիսի 15-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի՝ Բեռլին ուղարկված ծածկագիր հեռագիրը. «Ելնելով այն համոզմունքից, որ Գերմանիայի քաղաքականությունն անկեղծորեն և լրջորեն ձգտում է ամրացնել ասիական Թուրքիան, Մեծ Վեզիրը խնդրում է ինձ՝ նորին մեծություն կայսրին հաղորդել, որ ուղարկվեն գերմանական զեներալներ, որպես թուրքական բանակի ղեկավարներ»:¹ Նույն օրը Լիման Ֆոն Սանդերսը հրավիրվում է ստանձնելու Թուրքիայում գերմանական առաքելության պետի պաշտոնը: Բանակցությունները տևում են 6 ամիս, և նոյեմբերին ստորագրվում է զինվորական առաքելության պայմանագիրը: Առաքելության անդամների թիվը 42 էր, 1914թ. առաջին 6 ամիսների ընթացքում այն հասավ 70-ի, իսկ պատերազմի ավարտին՝ 800-ի:

Ռուսաստանի ծրագրերը կանխելու նպատակով Գերմանիան, որպես Բեռլինի պայմանագիրն ստորագրած պետություն, պահանջեց հայկական բարեփոխումներին մասնակցելու իրավունք: «Հագիվ պրծանք անիժյալ մակեդոնյան բարեփոխումներից, հիմա էլ հայերը», - մակագրել էր

1913թ. հուլիսի 9-ին Ֆոն Յագովից ստացված գեկուցագրի վրա Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ը.²

Բարեփոխումներին մասնակցելու իրավունք պահանջեց նաև Ավստրո-Հունգարիան, որի արտաքին գործերի նախարար Բերխսթորֆը Սյոդյանին Բեռլին ուղարկած հեռագրում նշում է. «Գերմանական կառավարությունը մի կողմից ղեկավարվում է Գերմանիայի կարևոր տնտեսական շահերով փոքր Ասիայում, մյուս կողմից՝ Ռուսաստանի հավանական հեռավոր ծրագրերը կանխելու մտադրությամբ: Խնդրում են Չերո գերագաղթողները հայտնել Ֆոն Յագովին, որ Ավստրո-Հունգարիան ևս մեծապես շահագրգռված է Ասիայում Օսմանյան տիրապետությունը պահպանելու մեջ: Այնպես որ ես սիրով պատրաստ եմ կոմս Մենդոդոֆի միջոցով պաշտպանելու ծրագրված նախաձեռնությունը»:³ Փաստորեն, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի համար ընդունելի չէր բարեփոխումների նախագիծը, և նրանք փորձում էին Բեռլինից և Վիեննայից տված հրահանգներով ձգձգել բարեփոխումների շուրջ բանակցությունները: Սակայն, ինչպես տեղեկանում ենք Փարիզում Գերմանիայի դեսպանի Բեթման Հոլվեգին 1913թ. փետրվարի 8-ին գրած նամակից, հայ գործիչները բարեփոխումների բանակցություններում տեղաշարժը կապում էին Գերմանիայի ակտիվ մասնակցության հետ. «...Պողոս Նուբար Փաշան, - նշվում է այդ նամակում, - ենթադրում է, որ ռեֆորմների համար աշխատանքը տեղից կշարժվի, եթե նրանում գործնական տեղ գրավի Գերմանիան: Գերմանիան ուղղակիորեն հետաքրքրված չէ բարենորոգումներով, բայց երևի շահագրգռված է, որ ռեֆորմներն անցկացվեն նաև Կիլիկիայում՝ Գերմանիայի հսկողության տակ: Գերմանիան, որն արդեն ունի այնտեղ բավական հետաքրքրություններ, շնորհիվ բաղդադյան երկաթգծի և արդյունաբերական ձեռնարկությունների, դրանով երաշխիքներ կստեղծեր տնտեսական և բարոյական իշխանության համար»:⁴

Այն, որ Ավստրո-Հունգարիան ըստ ամենայնի խոչընդոտում էր բարենորոգումների գործում Ռուսաստանի նախաձեռնությանը և, իհարկե, անում էր ամեն ինչ Թուրքիային աջակցելու համար, հավաստում է 1913թ. հունիսի 10-ին Վիեննայում Ռուսաստանի դեսպանից արտաքին գործերի մինիստրին ուղարկված նամակը, որտեղ, մասնավերապես, նշվում է. «Մարկիզ Պալավիչիին իրավունք ստացավ մյուս դեսպանների հետ միասին մասնակցելու Հայաստանի բարենորոգումների խորհրդակցություններին այն պայմանով, որ բարենորոգումները չհակասեն Օսմանյան կայսրության անձեռնմխելիությանը և Սուլթանի հեղինակությանն ու վարկին: Չիրակի խոսքերի համաձայն՝ գերմանական կառավարությունը, վերաբերմամբ Հայաստանի, հայտնեց իր լիակատար համաձայնությունը մեր առաջարկությանը»:⁵ Փաստորեն, բոլոր մասնակից եվրոպական պետությունների ցանկությունը մեկն էր՝ Ռուսաստանին հեռու պահել Թուրքիայի ասիական մասից: Այդ մասին հունիսի 10-ին Պալավիչիին գրում է. «Այն քայլը, որը ռուսական կառավարությունը վերջերս ձեռնարկել է մյուս կարիներների (կառավարությունների) նկատմամբ, և որի նպատակը հայերի համար ռեֆորմների հարցում համաձայնության գալն է, իմ համեստ կարծիքով Ռուսաստանի կողմից արդեն վաղուց ծրագրված մի մեծ ակցիայի նախաբանն է: [...] Ռեֆորմների մասին սուտը այս գործում նույն դերը պիտի խաղա, ինչ որ ժամանակին Մակեդոնիայում: Այդ ռեֆորմների մասին նախագծերը կմշակվեն, բայց միաժամանակ կարվի ամեն ինչ՝

իսկական ռեֆորմների իրագործումը ձախողելու համար: Շուտով այստեղ կլսենք ռումբերով մահափորձների մասին, հետագայում՝ ջարդերի մասին Հայաստանում, և Ռուսաստանն ստիպված կլինի դիմելու զինվորական միջամտության»:⁶

Հստակ է մի բան, որ չնայած բոլոր պետություններն էլ գիտակցում էին հայերի ծանր վիճակը, բայց նրանք առաջին հերթին մտածում էին սեփական շահերի մասին: Պալավիչինին այն կարծիքին էր, որ Ռուսաստանի առաջարկած երկու վիլայեթների ինքնավարության դեպքում ժամանակի ընթացքում հայ բնակչությունը ռուսական քարոզչության միջոցով կարող է հրահրվել գեներալ-նահանգապետի դեմ: Նման պարագայում ռուսները հնարավորություն կստանային բռնակցելու նաև այդ վիլայեթները: Հունիսի 23-ին Պալավիչինին Վիեննա հղած նամակում գրում է. «Այն որ Ռուսաստանի մտադրությունը երբեք չի եղել ռեֆորմների միջոցով հայերին խաղաղեցնելն ու Թուրքիայի հզորությունը մեծացնելը, երևում է հայկական ռեֆորմների հարցի հետագա զարգացումից: [...] Ռուսական քաղաքականության վերջին նպատակը միշտ էլ Պոլիսն է եղել: Այդ պատճառով Ռուսաստանի կողմից հայկական ռեֆորմների հարցը հարուցելու մեջ ես տեսնում եմ միմիայն նրա էքսպանսիայի հին քաղաքականության վերսկսումը և չեմ կարող հավատալ, որ Ռուսաստանն անկեղծորեն կհամագործակցի Ասիայում թուրքերի իշխանությունը հզորացնելու գործում»:⁷ Այս նամակից հստակորեն երևում է Ավստրո-Հունգարիայի դիրքորոշումը հայերի նկատմամբ. նա հայկական բարեփոխումների հարցը դիտում էր Ռուսաստանի և Թուրքիայի հետ իր քաղաքականության ենթատեքստում: Իսկ Ավստրո-Հունգարիան և Գերմանիան ամեն կերպ ջանում էին Ռուսաստանին հեռու պահել Ասիական Թուրքիայից, հետևաբար նրանց ձեռնտու էր Թուրքիայի արևելյան հատվածի ամբողջականությունը: Այդուհանդերձ հայկական բարեփոխումների գործը պետք է իր հետագա ընթացքն ունենար, և 1913թ. հունիսի 28-ին Վանգենհայմը հեռագրում է Բեռլին. «Գիրսի [Թուրքիայում Ռուսաստանի դեսպանի] առաջարկությամբ Պալավիչինին այս ամսի 30-ին դեսպաններին կհրավիրի նախնական քննարկումների: Անգլիայի դեսպանը երեկ ցուցումներ է ստացել: Պալավիչինին դեռ երկուշաբթի մտադրված էր հայտնել, որ ինքը պետք է ծրագրերը՝ այդ թվում Մանդելշտամինը, մերժի: Հետևաբար կոնֆերանսը կձախողվեր: Բայց, համաձայն երեկ դեսպանատանը հայերի արած հայտարարությունների, ես վախենում եմ, որ կոնֆերանսի ձախողումն առիթ կդառնա հայկական հուզումների համար: Այդ պատճառով իմ ավստրիական կոլեգային խնդրեցի հենց սկզբից կտրուկ հանդես չգալ: Մենք պետք է փորձենք մեր ցուցումներին համապատասխան համաձայնության գալ հայերի օգտին: Պալավիչինին կներկայացնի Մանդելշտամի նախագիծը այն նյութի հետ, որն այսօր Բարձր Դուռը կհանձնի դեսպանների տրամադրությանը (խոսքը վերահսկիչներով բարեփոխումների մասին է)»:⁸ Վանգենհեյմը ցուցումներ ասելով այստեղ ի նկատի ունի հունիսի 7-ին արտաքին գործերի մինիստրից ստացած նամակը, որտեղ մասնավորապես ասվում է. «...Գերմանիան չի բարձրացնի հայկական բարեփոխումների հարցը կոնֆերանսում, իսկ եթե Ամտանտը բարձրացնի, խնդրում եմ բացատրել, որ հայկական բարեփոխումները պահանջում են բոլոր մեծ պետությունների համագործակցությունը: Խնդրում եմ Գրեյին հայտնել, որ մենք խուսափում ենք հայկական բարեփոխումների հարցը

Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների տեսակետին»:¹³ Շուտով, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը ռեֆորմներն արագացնելու նպատակով, եվրոպական դեսպաններին հանձնում է հուլիզազիր, որում շեշտվում է ռեֆորմների անցկացման հույժ անհրաժեշտությունը:¹⁴ Ի հակառակ դրան՝ միջնորդ պետությունների դեսպանները բանակցությունները դանդաղեցնելու նպատակով ռուսական նախագիծը հանձնում են դեսպանատների պաշտոնյաներից կազմված մի հանձնախմբի քննությանը: Պալավիչինին այս հանձնախմբի կազմում նշանակում է Ավստրո-Հունգարական դեսպանության խորհրդական պրն. Պանֆիլին և պատվիրում հնարավորին չափ ձգձգել աշխատանքները, սակայն այնպես, որ ռուսները չնկատեն Ավստրո-Հունգարիայի մարտավարությունը:¹⁵ Այս կապակցությամբ հուլիսի 11-ին նա հեռագրում է Վիեննա. «Մինչև հիմա հաջողվել է ձգձգել ռեֆորմների նախագծի քննարկումը, առանց ռուսների կասկածը հարուցելու»:¹⁶

Ռուսական նախագծի հիմնական սկզբունքներից մեկը՝ սեփական խորհրդարաններ ունեցող հայկական 6 վիլայեթներից ինքնավար գավառի ստեղծումը՝ բոլոր հնարավոր իրավունքներով օժտված գեներալ նահանգապետի գլխավորությամբ, մերժվեց պետությունների դեսպանությունների ներկայացուցիչների կողմից այն մտավախությամբ, որ դրանով կխախտվի Սուլթանի ինքնիշխանությունը: Այդ պատճառով որոշվեց. «ռուսների բարենորոգման առաջարկն անընդունելի համարել, բայց նրա իրագործմանը դեմ լինել»:¹⁷

Ռուսական կողմը չէր ժխտում, որ իրենց առաջարկությունն ուղղված էր Թուրքիայի ասիական մասը Ռուսաստանի ազդեցության գոտի դարձնելուն, դա գալիս էր հաստատելու Պալավիչինի ենթադրությունը, և որ եթե գործը հասներ հայկական գավառների ինքնուրույնությանը, ապա Թուրքիայի ասիական մասի բաժանման գործը պետք է վճռված համարել:¹⁸

Այդուհանդերձ շուտով ավստրիական կողմն սկսում է տեղի տալ, և հուլիսի 12-ին Վանգենհեյմը հաղորդում է. «Այսօրվա նիստում ավստրիացին, պաշտպանելով հայերի հարցում գեներալ-նահանգապետի նշանակման տեսակետը, հայտնեց իր համաձայնությունն այն բանին, որ գեներալ-նահանգապետն էլ իրավունք ունենա չինովնիկներ նշանակելու և տեղաշարժելու: Շյոնենբերգը դեմ էր նշանակման իրավունքին, որը սահմանափակում էր սուլթանի իրավունքը:

Վարչական խորհրդի համար ռուսը հույս ունի քրիստոնյաների և մահմեդականների հավասար քանակով անդամների ընտրության, իսկ Շյոնենբերգը կողմ է համամասնությանը: Նույնը նաև նահանգային ժողովի համար: Ավստրիացին ընդունեց ռուսական սկզբունքը և վիճարկում է միայն տեխնիկական դետալներ: Իտալացին պաշտպանեց ավստրիացուն»:¹⁹ Ավստրիայի դիրքորոշումն, անշուշտ, անհանգստացնում էր Վանգենհայմին: Այս հարցի վերաբերյալ Վանգենհայմը հետևյալ մեկնաբանությունն է տալիս. «Ավստրիական ներկայացուցիչի դիրքորոշումը հիմնվում է Պալավիչինի ցուցումների վրա, որը դիտում է ռուսական նախագիծը գլխավոր կետի անհաջողությունից հետո, որպես անկում ապրած ու ցանկանում է դրանով զիջողություն ցուցաբերել: Այս քաղաքականությունը թվում է կասկածելի, քանի որ հետո Ավստրիան կարող է ընդդիմանալ այսօրվա հայտարարություններին, թեկուզ այն պատճառով, որ խուսափի

Եռյակ դաշինքի միջև տարաձայնություններից: Այդ պատճառով ես պետք է ավստրիական և իտալական կոլեգաների առջև հարց բարձրացնեմ, որ յուրաքանչյուր միտոից առաջ համաձայնեցվեն մեր երեք ներկայացուցիչների քայլերը»:²⁰ Սակայն արդեն օգոստոսին Վանգենհայմը այլ կարծիքի էր, և գտնում էր, որ ավելի նպատակահարմար է բարեփոխումների նախագծի ընդունման գործընթացն արագացնել, ելնելով քաղաքական որոշակի նկատառումներից. «Ռուսական կառավարությունը, - գրում է օգոստոսի 4-ին Վանգենհայմը Բեթման Հոլվեգին, - խորհուրդ է տալիս, որ բարեփոխումները Հայաստանում անցկացվեն անհապաղ, որ երկրի հանգստությունը հնարավոր է միայն, եթե պետությունները հետևեն դրանց իրագործմանը: Բացի այդ մեր շահերի տեսանկյունից առաջարկվում է անհապաղ տեղությունների հետ բանակցություններ սկսել բարեփոխումների շուրջ՝ վերահսկողությունը պետությունների ձեռքը վերցնելու համար, այլապես ռուսները կշարունակեն թունավորել հայկական բնակչությանը»:²¹

Մինչև 1914թ. փետրվարի 8-ը, երբ վերջապես համաձայնություն կայացվեց հայկական բարեփոխումների կապակցությամբ, դեռևս շարունակվում էին տարաձայնությունները Ռուսաստանի և բարեփոխումներին մասնակցող մյուս կողմի՝ Թուրքիայի, բնականաբար՝ Գերմանիայի, և Ավստրո-Հունգարիայի միջև: Այսպես՝ Տրապիզոնում ավստրոհունգարական հյուպատոսը հունվարի 30-ին հաղորդում է, որ հայերն այնտեղ Հայաստանի ապագայի խնդրում մեծ դեր են հատկացնում Ռուսաստանին, քանի որ Ռուսաստանը նրանց խոստացել է Ֆինլանդիայի նման ինքնավարություն տալ: Նա շարունակում է. «Բարեփոխումներն իրականացնելու դեպքում Ռուսաստանն այնտեղ կիրահրի հայերին թուրքերի դեմ, այդ նպատակով շատ փող կբաժանի, ծածուկ գեներ կմատակարարի հեղափոխականներին և հայկական ապստամբություն բռնկվելու դեպքում կմիջամտի»:²²

Այս ընթացքում Վանգենհայմին հաջողվում է ռուսներին իր կողմը տրամադրել. Ռուսաստանի և Գերմանիայի միջև համաձայնություն է կայանում Թուրքիա զինվորական հանձնախումբ ուղարկելու գերմանական կողմի առաջարկության հարցում:

Ռուսաստանի բանակցությունները Թուրքիայի հետ ավարտվեցին 1914թ. փետրվարի 8-ին ռուսական դեսպանության խորհրդական Գուլյեփիչի և Մեծ Վեզիր Սայիդ Հալիմի միջև ստորագրված ռուս-թուրքական համաձայնությամբ, որը սահմանեց հայկական բարեփոխումների բովանդակությունը: Ըստ այդ համաձայնագրի հայկական 7 վիլայեթները՝ Էրզրումը, Տրապիզոնը, Սվազը, Վանը, Բիթլիսը, Խարբերդն ու Դիարբեքիրը բաժանվում էին 2 հատվածի՝ եվրոպացիների և Բարձր Դռան կողմից ընտրված օտար գեներալ-տեսուչների առկայությամբ: Նրանք պետք է «վերահսկեին վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունը, ժանդարմներին, ինչպես նաև առանձին վալիների գործավարությունը: Նրանք են նշանակում ստորին պաշտոնյաներին և առաջարկում Բարձր Դռանը նշանակել բարձրաստիճան պաշտոնյաներին: Նրանք կարող են նմանապես պաշտոնագրվել բոլոր պաշտոնյաներին, իսկ վալիներին պաշտոնագրվելու առաջարկը պետք է ներկայացնեն Բարձր Դռանը: Ապահովվում է ազգաբնակչության առանձին շերտերի համամասնական ներկայացուցչությունը վիլայեթների գլխավոր խորհուրդներում, այնպես որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների գլխավոր խորհրդարանները կիսով

բաղկացած լինեն քրիստոնյա ներկայացուցիչներից: Օրենքներն ու հրամանագրերը պետք է գրվեն 2 լեզվով՝ թուրքերեն և հայերեն, դատավճիռները՝ թուրքերեն, հայերեն թարգմանությամբ: Երկու լեզվի գործածումը դպրոցում և իշխանության մարմիններում երաշխավորվում է»:²³ Նույն օրը Թուրքիայում ռուսական գործերի հավատարմատարը գրում է, որ Սայիդ Հալիմը հույս է հայտնում, թե հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև կբարելավվեն:²⁴

Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դիվանագետներն իրենց կողմից բարեփոխումների բանակցությունների գործընթացի ձգձգումների մեղքը փորձում էին վերագրել Ռուսաստանին, այդպիսով փորձելով «արդարացնել» իրական ձգձգումները, որոնք կատարվում էին Վիեննայի և Բեռլինի հանձնարարությամբ: Այդուհանդերձ՝ համաձայնություն կնքելու հաջորդ օրը Պալավիչինին նամակ է ուղարկում արտաքին գործերի նախարարություն, որտեղ նա, մասնավորապես, նշում է. «Ռուսական գործերի հավատարմատարն ինձ հայտնեց, որ հայկական բարեփոխումների հարցում ռուսական դեսպանության և Մեծ Վեզիրի միջև ձեռք է բերվել կատարյալ համաձայնություն: Նա ինձ փոխանցեց նոտային կից ներկայացվող նախագիծը, որ Բարձր Դուռը պետք է ուղարկեր այստեղի դեսպանատներին այն բանից հետո, երբ նրանք պետություններին 2 տեսուչների [թեկնածություն] անվանելու ցանկություն կհայտնեն: Այդ տեսուչները պիտի ընտրվեն Հոլանդիայից, Բելգիայից, Նորվեգիայից կամ Դանիայից:

Ռուսական գործերի հավատարմատարի ինձ փոխանցած արդեն հիշատակված գրությունից երևում է, որ Պետերբուրգի կառավարությունը, վերջապես ընդունել է այն ամենը, ինչի շուրջ արդեն 2 շաբաթ առաջ կայացել էր պայմանավորվածություն Մեծ Վեզիրի և այստեղի ռուսական դեսպանության միջև: Այսուհետև դժվար է դատադրություններ անել այն մասին, ինչը դարձել էր բանակցությունների վերջին փուլում պարոն Սագոնովի կողմից բարձրացված դժվարությունների բուն հիմքը»:²⁵

Ծնայած՝ գերմանական կողմը համարում էր, որ բանակցությունների շուրջ համաձայնության գալը իրենց ձեռքբերումն է, բայց Պողոս Նուբար Փաշան, որը խորապես զբաղվում էր բարենորոգումների խնդրով, գտնում էր, որ «հայ ժողովուրդը կրկնակի չափով պարտական է Ռուսաստանին»:²⁶

Այն, որ Գերմանիան էլ իր ձեռքբերումն էր համարում պայմանագիրը, վկայում է փետրվարի 9-ին Կ. Պոլսում գերմանական դեսպանությունից Բեթման-Հոլվեգին ուղարկված նամակը. «Երեկ, պետերբուրգյան կառավարության զիջումների արդյունքում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր գալիք ռեֆորմների մասին:

Այս ամենը չէր կարող իրագործվել առանց Գերմանիայի միջնորդության: Վանգենհայմը կարողացավ թուրքական քաղաքականությունը բերել այն ուղղության, ինչը պետք է նպաստի ճիշտ ընկալված թուրքական և գերմանական շահերին, գերմանա-ռուսական հարաբերություններին...»:²⁷ Այս առնչությամբ մարտի 24-ին “Новое Время”-ն գրում է, որ բարենորոգումների ընդունված ծրագիրը «մի կոմպրոմիս է հանդիսանում ոչ այնքան ռուսական և թուրքական հայացքների, որքան պետերբուրգյան և բեռլինյան արտաքին քաղաքականությունների»:²⁸

Բարեփոխումների հետագա «ճակատագիրը» հայտնի է. Թուրքիան ընդունեց բարենորոգումների նախագիծը, և հայ ժողովուրդի մոտ սկզբնա-

կան շրջանում հույսեր արթնացան, որ դրանք կիրագործվեն: Ի դեպ՝ կապակցությամբ «Մշակը» գրում է. «Մենք հավատում ենք, որ այդ բարեփոխումների մեծած տարրեր չեն մնա, որովհետև Ռուսաստանը շահագրգռված է նրանց իրագործման մեջ: Ռուսաց շահերը պահանջում են հայկական բարեփոխումների իրագործում, ուրեմն նրանք պետք է իրականանան»:²⁹ Իսկ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Գիրսը մայիսի 18-ին (31) հավաստիացնում էր Չավրիկին, որ «թույլ չի տա, որ Բարձր Դուռը իր հայեցողությամբ խաղա գլխավոր տեսուչների հետ»:³⁰ Բայց իրականում բուրքական կառավարությունն ամեն միջոցի դիմում էր, որ բարենորոգումները մնային թղթի վրա: Բարձր Դուռը մտադրություն չունեի կատարելու 1914թ. փետրվարի 8-ի համաձայնագիրը՝ եվրոպական պաշտոնյաներին գործադիր իշխանություն տալ Արևմտյան Հայաստանում: Այդ մասին դեռ բանակցությունների սկզբում Գիրսն արտաքին գործերի նախարարին հղած նամակում մտավախություն է հայտնում, որ հարկավոր է զգույշ լինել, որպեսզի այդ բարեփոխումներն էլ 1895թ. բարեփոխումների նման բարձիթողի չմնան և նշում է, որ ռեֆորմների ձախողման դեպքում ռուսական զորքերը հավանաբար անհրաժեշտություն կունենան մտնելու հայկական վիլայեթներ:³¹

Գիրսի մտավախությունն իրականացավ. Առաջին համաշխարհային պատերազմը նպաստեց, որպեսզի այս անգամ էլ հայկական բարեփոխումների ծրագիրը մնա թղթի վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Մնացականյան Ա. Գերմանո-բուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում, Երևան, 1948, էջ 37:
- ² Օհանջանյան Ա. 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 52:
- ³ Ohandjanian Artem. Österreich-Armenien 1872-1936, Diplomatische Aktenstücke, Wien, 1995, Bd. 5, S. 3981.
- ⁴ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции (1913-1919), Материалы Политархива МИД Кайзеровской Германии (составитель, отв. ред. Микаелян В.), Ереван, 1995, с. 30-32.
- ⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), (Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ), Երևան, 1972, էջ 193:
- ⁶ Ohandjanian Artem. Österreich-Armenien., Bd. 5, S. 4001.
- ⁷ Նույն տեղում, Bd. 5, S. 4022:
- ⁸ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции (1913-1919)…, с. 67.
- ⁹ Նույն տեղում, с. 53-54.
- ¹⁰ Ohandjanian Artem. Österreich-Armenien., Bd. 5, S. 4036.
- ¹¹ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции (1913-1919)…, с. 69.
- ¹² Сборник дипломатических документов. Реформы в Армении. (26 ноября 1912 года – 10 мая 1914 года). Петроград, 1915, стр. 73.
- ¹³ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции (1913-1919)…, с. 78-79.
- ¹⁴ Сборник дипломатических документов., стр. 73-75.
- ¹⁵ Ohandjanian Artem. Österreich-Armenien., Bd. 5, S. 4085.
- ¹⁶ Նույն տեղում, էջ 4080:
- ¹⁷ Նույն տեղում, էջ 4071:

¹⁸ Նույն տեղում, էջ 4076:

¹⁹ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции (1913-1919)..., с. 80.

²⁰ Նույն տեղում, էջ 80:

²¹ Նույն տեղում, էջ 114-115:

²² Ohandjanian Artem. Osterreich-Armenien..., Bd. 6, S. 4300.

²³ Օհանջանյան Ա. 1915 թվական. Անհերքելի վկայություններ..., էջ 62:

²⁴ Сборник дипломатических документов..., с. 158.

²⁵ Ohandjanian Artem. Osterreich-Armenian..., Bd. 6, S. 4304.

²⁶ Հիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 194:

²⁷ Армянский Вопрос и Геноцид Армян в Турции, (1913-1918)..., с. 149-151.

²⁸ Հիրակոսյան Ջ, Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 194-195:

²⁹ «Մշակ» 01.01.1914, թիվ 1:

³⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.2, գ. 676, ք. 144:

³¹ Сборник дипломатических документов..., с. 3-5.

Резюме

Роль Австро-Венгрии в процессе Армянских реформ 1912-1914гг.

Манвел Вопян

В Западной Армении было совершено много попыток провести реформы, но все они оказались безуспешными. Реформы 1912-1914гг. тоже оказались недействительными. В этой реформе свое содействие оказала Австро-Венгрия.

Политика Австро-Венгрии имела целью помешать переговорам вокруг реформ, стараясь таким образом держать подальше Западную Армению от Российского государства.

Но усилия Австро-Венгрии и Германии не имели успеха: 8-го февраля 1914 года состоялось соглашение по проведению реформ в Западной Армении.

Но как известно Первая мировая война и в этот раз не позволила, чтобы закончился долгожданный процесс реформ.

Summary

The Role of Austria-Hungary in the Process of Armenian Reforms in 1912-1914.

Manvel Vopyan

Lots of attempts were done to make reforms in Western Armenia, but the process of it was without any results. The reforms of 1912-1914 also gave no results. Austria-Hungary also cooperated in the organization of these reforms.

Austria-Hungary's policy had an aim to interfere with the negotiations thus keeping Russia away from Western Armenia. The efforts of Austria-Hungary and Germany were unsuccessful. On February 8, 1914 an agreement was reached to make reforms in Western Armenia. But the World War I didn't allow this long-expected process of reformation to come to an end.